

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ ԵՎՐՈՊԱՅԻ ՔՈԼԵՋԻ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ

Եվրոպայի քոլեջի շրջանավարտների հայաստանյան ասոցիացիան «Շրջանավարտների դեսպանության ծրագրի» շրջանակներում սիրով հրավիրում է ձեզ մասնակցելու Եվրոպայի քոլեջի ակադեմիական և կրթաթոշակային ծրագրերի ներկայացմանը նվիրված առցանց հանդիպմանը:

Օրը՝ 09.12.2021

Ժամը՝ 16:00

Հանդիպմանը մասնակցելու համար հարկավոր է մինչև **ս.թ. դեկտեմբերի 7-ը** գրանցվել [այստեղ](#): Գրանցումից հետո ձեզ կտրամադրվի հանդիպման հղումը:

ԵՎՐՈՊԱՅԻ ՔՈԼԵՋԻ ՄԱՍԻՆ

Եվրոպայի Քոլեջը հանդիսանում է Եվրոպայի հեղինակավոր համալսարաններից մեկը, որը հիմնադրվել է 1949 թվականին: Եվրոպայի քոլեջը առաջարկում է հետբուհական ծրագիր, հետևյալ մասնագիտություններով՝

- Եվրոպական տնտեսական ուսումնասիրություններ (Բյուզեի ամբիոն)
- Եվրոպական իրավական ուսումնասիրություններ (LLM) (Բյուզեի ամբիոն)
- Եվրոպական քաղաքական և կառավարման ուսումնասիրություններ (Բյուզեի ամբիոն)
- ԵՄ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ուսումնասիրություններ (Բյուզեի ամբիոն)
- Անդրատլանտյան հարաբերություններ (Բյուզեի ամբիոն)
- Եվրոպական միջառարկայական ուսումնասիրություններ (Նատոլինի ամբիոն):

ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եվրոպական միությունն առաջարկում է մեծ թվով կրթաթոշակներ Հայաստանի Հանրապետության բուհերի շրջանավարտներին՝ Եվրոպայի քոլեջի Բյուզեի (Բելգիա) կամ Նատոլինի (Լեհաստան) ամբիոններում, հետ բուհական կրթություն ստանալու համար: Վերոնշյալ կրթաթոշակները փոխհատուցում են ուսման, կեցության, սննդի և ճանապարհորդության ծախսերը, ինչպես նաև ներառում են որոշակի գումար առօրյա մանր ծախսերը հոգալու համար:

Միջոցառումը կվարի Եվրոպայի քոլեջի շրջանավարտ-դեսպան Անժելա Մնացականյանը